

ՏԱՃԿԱՀԱՅՈՑ ՀԱՄԵՐԱՇԽ ԳՈՐԾՈՒՆԷՌԻԹԻԿՆԸ

ՍՅՃԾՄ ԱԻԵԼԻ ՔԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է.

Տաճկահայոց համերաշխ գործունէութեան կարիքը գուցէ երբէք այնքան զգալի չէ եղել, որչափ վերջին ժամանակներս: Երբ հասել էր բոպէն որ Եւրոպական պետութիւնները՝ զլիաւորապէս Ռուսաստանը, աշխատում էր իրականացնել Հայաստանի վաղուց երազած բարենորոգումները՝ ի պատիւ Տաճկահայոց պիտի ասենք՝ որ գոնէ որոշ Հափով պահպանուեց համերաշխ գործունէութիւն թէ Պօլսում և թէ գաւառներում: Եւ հէնց տարբեր հոսանքների համերաշխ գործունէութիւնն էր՝ որ զգալի Հափով նպաստեց բարենորոգումների ծրագրի-հանդէս գալուն: Իրաւամբ վսեմ, Պօղոս փաշայ Նուբարը եղիպտոս վերադառնալուց՝ իրեն ներկայացող հայերին նկատել է՝ որ «մեր գործի յաջողութեան Հատ նպաստեց նաև կուսակցութեանց համերաշխ գործունէութիւնը»: Սակայն դժբախտաբար պէտք է այստեղ նկատենք՝ որ այդ համերաշխ գործունէութիւնը թէ Պօլսում և թէ գաւառներում եթէ գոհացուցիչ Հափով լինէր՝ գուցէ այժմս ունենայինք աւելի յաջող ծրագիր բարենորոգումների, քան իրօք մենք ունեցանք: Պօլսահայերն և սրանց յետևից գնացող գաւառահայերն աւելի զբաղուած են դժբախտաբար մեպուսական արձուների խնդրով և տարիներեց ի վեր ձգձգուող անպատակ Սաղիմական վէճերով, քան բարենորոգումների ծրագրի և նորա իրականացման հարցով, որովհետև մէջ տեղ ոսկիների խնդիր կայ: «Հորիզոն» թերթը (№ 75) ճիշտ կերպով նկատում է. «Որքան կոյր պէտք է լինել Հաարբերելու միմեանցից մի հիմնական հարց, ինչպիսին է Հայկական ռեֆորմները և մի տասերորդական հարց, ինչպիսին է պարլամենտում մէկ պատգամաւոր աւելի կամ պակաս ունենալու հարցը»: Եւ յիրաւի՝ կաւեւացնենք մենք, որքան անհեռատես պէտք է լինել, որ երկար տարիներ ի փորձառութիւնից չկարողանան օգտուել և չըմբռնեն Հա-

միդեան շարունակուող քաղաքականութիւնը, որով Տաճկահայերին զրադեցնում են ակթունների հարցով և բեֆորմների խնդրում իրենց ցանկացած ուղղութիւնը տալիս:

Ազգիս Վեհափառ Կաթողիկոսն բարենորոգումներ ծրագրելը կազմելու շրջանում շարունակ կոնգակներով, Պատրիարքին և ուրիշներին ուղղած, յորդորել է մեր Տաճկայ եղբայրներին ամեն կերպ աշխատել համերաշխ թանալ յանուն գործի յաջողութեան: Այդպիսի մի կոնգակ Վեհափառ Հայրապետն ուղղել էր անցեալ 1913 թուի 21-ն յուլիսի եգիպտոսի Աղէքսանդրիոյ ժողովի նախագահ եուսուֆ պէյ Զրաքեանին հետեւեալ հայրական խօսքերով.

«Փոռութեամբ սրտի և հոգեկան մխիթարութեամբ իրազեկ եղաք յազգային օրագրաց և ի գրութենէ Ձերմէյ յուլիսի տարւոյս, եթէ ամենայն քաղաքական կուսակցութիւնք հայոց միաբանեալ ընդ միմեանս, համերաշխ և սրտեռանգն ոգւով աշխատ լինին վասն ապահովութեան Հոգեւոր որդւոց Մերոց Տաճկահայաստանի, որք, տարաբախտաբար, կան յանմխիթար և յանապահով վիճակի:

Ի յուշ ածեալ Մեր զդառնազին պայմանս գոյութեան նոցա, զանապահովութիւնս կենաց, ընչից և պատուոյ և զանակարագրելի թշուառութիւնս, տառապիմք և վշտանամք ի սիրտ և ի հոգի, սակայն զարդիս տեսանելով զհամերաշխ և զմիաբան գործակցութիւն յազգային գործս զաւակաց Մերոց առանց խտրութեան քաղաքական և կրօնական համոզմանց, սփոփիմք և վիշտն Մեր մեղմանայ և յոյսն զօրանայ, քանզի արդարեւ միմիայն միաբան ոգւով, հեռատես և համերաշխ գործունէութեամբ ամենայն գործչաց հայոց, հիմունք ազգային կենաց մերոց լինիցին հաստատ և անդրդուելի և յառաջադիմութիւնն առողջ և անսայթաք, զի գուգութիւն է մայր ամենայն բարեաց»:

Այժմ երբ հրպարակի վրայ է բարենորոգումների գործադրութեան խնդիրը, որքան մեծ համերաշխութիւն և ոյժերի լարում է պահանջում Տաճկահայ մտաւորականների, կուսակցութիւնների կողմից, որ նպաստեն ամեն կերպ շուտով իրականացնելու ընդունուած բարենորոգումները:

Որքան նիւթական կորուստներ և տասնեակ հազարաւոր մարդկանց զոհեր են ունեցել տաճկահայերը տարիների ընթացքում, մինչև որ հազիւ հազ յուսոյ արևն ծագեց և բարենորոգումների ծրագիրն հանդէս եկաւ և որի իրականացման շրջանումն ենք ապրում: Ոչ ոք չպէտք է մոռանայ՝ որ այդ բարենորոգումներն մեծ դժուարութեամբ հանդէս եկան շնորհիւ Ռուսաց կառավարութեան գործ դրած կարական միջոցների և Ազգիս Վեհափառ Կաթողիկոսի ներկայացուցիչ վսեմ. Տ. Պօղոս փաշայ նուբարի չափազանց փորձուած ու խոհուն գործելակերպի: Հետևապէս Տաճկահայ գործիչներն էլ պէտք է նոյնպէս ամենայն զգուշութեամբ և խոհականութեամբ առանց աւելորդ աղմուկների, հետամուտ լինեն նպաստել իրականացնելու բարենորոգումների ծրագիրը: Հայ քաղաքական գործիչների համերաշխ գործունէութիւնը ամենամեծ գրաւականն է «Հայկական հարց»ի յաջողութեան:

Հասել է պատմական կարևոր ժամը, երբ ռուսահայն և տաճկահայը միացած պէտք է աշխատեն Տաճկահայաստանում զարկ տալ ազգային կուլտուրային, բաց անել ամեն տեղ դպրոցներ և այլ լուսոյ տաճարներ, դիմել միջոցների կանոնաւորելու հողային հարցը և նպաստելու ամենամեծ չափով գիւղատնտեսութեան զարգացման, նոյնպէս և վաճառականութեան ու արդիւնաբերութեան ծաղկման: Մեծ ջանք պէտք է գործ դնել զաղթականութեան առաջնառնել և ընդհակառակն պէտք է դիմել միջոցների և հեռու երկիրներ գաղթած տաճկահայերին բերել Երկիր և հրաւիրել ամենիցն ձեռք ձեռքի տուած գործել ու նպաստել Երկրի տնտեսութեան ու յուսատուութեան սուրբ գործին:

Հայերս ամեն կերպ պէտք է ցոյց տանք ոչ միայն Ռուսաստանին, այլ և ամբողջ Եւրոպային, որ մենք ներկայումս Բաղաճականապէս հասունացած մի ազգ ենք, ազգ, որ ընդունակ է ապրել իւր ինքնուրոյն կեանքով, ընդունակ է զարգացնլ իւր կուլտուրան: Թող վերստին մի աւելորդ անգամ ևս համոզենք Եւրոպային՝ որ աշխատանքի

ընդունակ հայ ազգն է եղել դարեւից ի վեր Ասիայում
 եւրոպական ֆաղափարքութիւնն տարածողը:

Արդարեւ, այժմ աւելի քան հայի համար պատմական
 մոմենտ է:

Հայ թերթերում արժարժուեց Հայաստանում հայ
 զրամատէրերի միջոցով բաց անել Դրամատուն: Որքան
 խելացի միտք և ճիշտի հափազանց կարեւոր ձեռնարկութիւն:
 Ոչ մի կասկած չէ կարող լինել՝ որ կանոնաւոր հիմունք-
 ների վրայ տրուած հայկական խոշոր դրամատունը կրլինի
 այն մեծ առանցքը՝ որի շուրջը տմենամեծ յաջողութեամբ
 կըզարկանայ և կ'ընթանայ Տաճկա-Հայաստանի և տնտեսու-
 թիւնը, և լուսաւորութիւնը և քաղաքակրթութիւնը: Հաւա-
 տացած եմ, որ Ռուսական կառավարութիւնն ոչ միայն հա-
 կառակ չի լինիլ, այլ ընդհակառակը մեծ չափով կ'աջակցի
 այդ կարեւոր հաստատութիւնն Հայաստանում ունենալուն
 նպաստող հայ զրամատէրերին: Թող ուրեմն մեր Տաճկահայ
 և Ռուսահայ զրամատէրերն հանդէս բերեն իրենց ձեռ-
 ներէցութեան ուղին և հեռատեսութիւնը ու ձեռք ձեռքի
 առած զլուխ կանգնեն այդպիսի մի վերին աստիճանի
 օգտակար և ներկայումս աւելի քան անհրաժեշտ հաստա-
 տութեան իրականացման գործին:

Ահա թէ Պօլսահայերը ինչով պէտքէ զբաղուեն՝ մի
 կողմը թողնելով իրենց երկրորդական զբաղմանց խնդիր-
 ները: Ահա թէ Կ. Պօլսի Աղգային Ժողովն ու կուսակցու-
 թիւններն որտեղ պէտք է իրենց եռանդն ու թանկագին
 ժամերն գործ դնեն՝ նպաստելու բարենորոգումների իրա-
 կանացման և հայ բազմաչարչար Ժողովուրդի անտեսական
 և մտաւոր զարգացման:

Բաբգէն վարդապետ

16 ապրիլի 1914

Ս. Էջմիածին